

Դանջիւն յընթացս ամի արժանացեալ էցէ ընտիր ընտիր վը-
կայանշանից և ի վերջնում հարցաքննութեան՝ վատթարացեալ
յայդ հափ՝ թէպէտ ի մէջ բերեալ՝ բայց ոչինչ յառաջեաց. և այս-
պէս մնայ իրն որպէս կայր: Խառնաչփոթ իրք առ մեզ բա-
զումբ. կարդ և կանոն սակաւ. Էմինն առնէ ինչ որ կամի. և
պաշտել զպաշտօն դաստիարակի յայսպիսի Բարիլոնեան խառ-
նակութեան միջի՝ ոչ պատուաւոր ինձ և ոչ իսկ ախորժական.
յուսայաք բարւոքել զվիճակ մեր և օգտել հայոց՝ գալով ի Ղա-
զանայ և փոխանակելով զպրօֆեսսորութիւնն ի կայսերական հա-
մալսարանի ընդ ստորակարգ (եւ զրամով եւ աստիճանաւ)
պաշտաման առ Լազարեանց. բայց խաբեցաք ըստ ամենայնի
և զղջամբ յոյժ յոյժ: Փոխանակ պրօֆեսսորի եղեաք էչ բեռնա-
բարձ, փոխանակ առն ուսումնականի և պատուելոյ ի շարս
գիտոնց՝ իրբն մի յամբօխէ հասարակ վարժապետաց. սակաւ
են աւուրք մերոյս պաշտաման աստ, բայց բազումբ յոյժ՝ փորձք
փորձեալք ի մէնջ. Աստուած տուաջնորդեսցէ առ բարին:

Դիշտ հարազատ ձեր՝
Ա. Դ. 1)

Ի 17 Յունիսի 1851.

Ի Մոսկվա.

ԿԱՐՆՈՅ ՕՎԱՅԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Համայն Օվալի գիւղորէից նորապէս սահմանեալ
բարեկարգութեան օգտաւէտ և պատուիրանական կա-
նոններ, ի Կարնոյ Արժանապատիւ Առաջնորդ Տեառն
Կարապետի Առաքելազարդ Սրբազան Արք Եպիսկոպոսէ
կանոնեալ՝ և առ մեզ հասեալ. և մեր ամենայն զգու-
շութեամբ ընկալեալ ի մտի եղաք. մտածեցաք նրբա-

1) Ս. Նազարեանի ինքնաձեռագիր այս նամակի տակ
իւր իսկ ձեռքով ստորագրած է այդ երկու տառերը, որ ան-
շուշտ մի պայմանական ստորագրութիւն է: Ծ. Խմբ.

գննին մտօք՝ որ է մեծ օգուտ համայն ազգի մերում. վասնորոյ և արժան վարկաք շնորհել զօրինակն ձեզ՝ զոր պարտիք և դուք ընկալնուլ սիրով և հնազանդութեամբ, և հաստատուն պահել զոր ինչ և իցէ:

Ամենայն Հայազգի քրիստոնեայք արժանաւոր հնազանդութեամբ և պատուով պարտական են իւրեանց քահանայքն պատուել. և անոնց ամմէն կանոնական և բարի խրատներուն և թէմպէհներուն՝ Աստուածային պատուիրաններու պէս հնազանդ և մտիկ ընօղ ըլնալ, և ով որ քահանայից բարի թէմպէհներուն հնազանդ չըլնայ՝ մեզ և քրիստոսի Աստուծոյ մերոյ հնազանդ չէ, և սուտ քրիստոնեայ է:

Ամենայն Հայազգի քրիստոնեայք, ամենայն հայոց եկեղեցւոյ կանոնական կիրակիները պարտական են անխախտ պահել. և կիրէկի չպահօղ հաւատացելոյն քրիստոնէութիւնը հաստատուն չէ, այլ շիւպհելի է:

Քրիստոնեայք ամմէնքը պարտին սէր ընել՝ և սէր ունենալ միմեանց հետ, որ Քրիստոսի հաւատացեալ ըլնալները հասկըցվի, գէրէքի ըսաց քրիստոս դուք մէկգմէկու սիրելով՝ և միմեանց հետ սիրով մնալով՝ կճանչվիք թէ իմ ծառաներս էք:

Գլխաւորաբար աղէկ գիտցիք՝ որ աղօթքը մարդոյս հոգւոյն կերակուրն է. ուրեմն ինչպէս որ հացը մարմիններուս հարկաւոր է և պէտքական՝ ասոր պէս ալ աղօթքը հոգիներուս հարկաւոր է. և ինչպէս որ հաց չուտելով մարդը սովամահ կըլնայ և կը մեռնի մարմինը, այսպէս ալ աղօթք չընօղ մարդոյ հոգին կը մեռնի. և աղօթկին տեղը ուր տեղ է՝ յատկապէս եկեղեցին. ապա ուրեմն քրիստոնեայ եղօղը թէ ալը թէ կին. թէ հարս թէ աղջիկ, թէ մեծ թէ փոքր պարտական է յեկեղեցին գնալ՝ և անդ աղօթքին հոգևոր կերակրովը հոգին կերակրել որչափ որ կարելի է. գէրէ

ամմէն մէկ քրիստոնեայ թէ ալ թէ կին. թէ հարս
և թէ աղջիկ հիչ չենէ պարտական է որ շաբաթ և
կիրակի օրերը՝ մանաւանդ պատարագ եղած օրերը եկե-
ղեցին գնայ. և իւր մեղացը թողութիւն խնդրէ. և ով
որ անշահ զրուցնէրով թէ հարս և թէ աղջիկ եկեղե-
ցիէն արգիլէ նէ՝ անոր մեղացը կըցորդ. կըլնայ. և ա-
նոր մեղաց համարը ինքը պիտի տայ. Նաև ծաներուք՝
թէ և Աստուծոյ անունը ուրտեղ որ կանչըվի՝ անդ է
Աստուած. լէքին յատկապէս յեկեղեցին է. ապա յեկե-
ղեցի գնացօղներդ՝ որ աստուծոյ երես գելլէք՝ մտածե-
ցէք թէ որքան ահիւ և դողութեամբ և պարկեշտու-
թեամբ պիտի ըլնաք եկեղեցւոյ մէջ. և մեղքերնիդ
լաք. որ Աստուած ալ ձեզ ողորմի:

Ալլազգի ձեռօք և ալլազգի գիտութեամբ աղջիկ
կամ մանչ նշանել ուզօղ քրիստոնեայն՝ եկեղեցւոյ խոր-
հրդոյն անարգօղ է. և եկեղեցին ալ անանկ մարդը
կանարգէ. և նշանածն ալ չի վայելէ. ուստի ալլազգի
գիտութեամբ ամենեւին նշան չի պտի ըլնայ:

Օրինաւոր խնամախօսութիւն այս է

Խնամախօսութեան երթայ մէկ քահանայ՝ և մէկ
մարդը միայն մանչուն կողմէն հետը. բայց երկուքն
ալ խմած չի պտի ըլնան ամենեւին. և երբ հաւանի
աղջրկան տէրը և խօսք տայ՝ պարտին մատանին մեզ
բերել և օրհնել տալ:

Նշանին պէհն տասն և մէկ ղուռուշէն վեր չի
պտի ըլնայ. մէկ մատնի, և մէկ փուշի՝ մեր գիտու-
թեամբը քահանայն առնէ տանի սղջրկան տունը. մատ-
նին աղջկան մատն անցնէ և փուշին՝ գլխուն ցկէ:
Բայց ղէգի փարայ. հէ տէմէսի՝ և ալ ինչ ալսպիսի
ամենեւին չրկայ և չըլնայ:

Եւ աղջրկան տէրը խրմած կամ չխմած ըլնալով՝

եթէ ղէզի փարայ կամ հէ տէմասի ինչ որ ուզեննէ՝ խնամախօսութեան գնացողը բօշ խօսք տայ կուտամ ըսէլով. և կամ ուզածը տայ. բայց միւս օրը թօղ գայ մեզ ծանուցանէ, և տուածը մեզնէն առնու, թէ որ չգայ և չծանուցանէ, երկուքն ի միասին դատաստանի ներքեւ կան կանին. և երկուքն ալ պիտի դատուին:

Հարսընտեսը պիտո մեծ քահանա մէկ ուռուպիէ տայ. և տահայ վարը մէկ տօղսաննոց տայ. և տահայ վարը մէկ լեւթ միշնոց տայ. բայց հարսնացու աղջիկը հարսըն տեսեկօղնեւուն՝ թէ մեծին և թէ փոքրին ամենեին բան մի խիլայ չի պիտի տայ բնաւ. և հարս գնալու ժամանակըն ալ հարսընտես եկած մարդոցը ամենեին խիլայ չի պիտի տանի:

Հարսընտես եկողը՝ թէ գիւղին միջէն ըննայ՝ հարսընտես ընէ և գնայ. բայց գիշեր մնալ ամենեին չըկայ և չըննայ. ապա թէ ուրիշ գիւղէ ըննայ հարսընտես եկողը՝ մէկ գիշեր կենայ, և միւս օրը անպատճառ գնայ. նշանած մանչուն՝ նշանած տեղը թէ բազմութեամբ և թէ մինակ աներանցը տունը գընալ չըկայ՝ ամենեին չըննայ:

Հարս եղող աղջիկը տուն տանիլ. կամ տնէտուն հանդէսով ժուռ ածել ամենեին չկայ՝ և բնաւ չըննայ:

Հարսանեաց հինալին հետ կին ամենեին չի պիտի ըննայ. ալ մինակ քահանայն՝ չորս աղ սախալի հետը առնու և հինան տանի:

Շապիքը մէկ կին մի տանի մէկ տղայի հետ. և քահանայն ևս հետը երթայ և գայ. և ամենեին այլ մարդ չլինի հետերնին. և սազ կամ տիկ՝ և կամ այլ ինչ հինին յառաջ չի պիտի երթայ:

Առանց կանչելու մարդ հարսնիք չերթայ՝ թէ այլ թէ կին. թէ մեծ և թէ փոքր:

Երկու շափթի գիշերանց՝ կամ առաւօտը թագուռ-

ըը պարտի գնալ հարսին տունը և ըստ կանոնական հրամանին քահանայն աղջրկան տունը ձեռնադրութիւն ընէ փեսային և հարսին՝ և ապա գնան յեկեղեցին. և առանց ձեռնադրութեան հարսը փեսային տունը չի պիտի գայ:

Թէ պսակ գնալու և գալու ժամանակը, և թէ ալ ժամանակ թագւորին կամ կնքահօրը ձեռքը ամենեւին բան չի պտի ըլնայ. ո՛չ թուր, ո՛չ դանակ. ո՛չ ծառ. ո՛չ խաչ. ո՛չ դէլէնէկ. և ո՛չ ալ ինչ:

Հարսին հետ մէկ մեծ կին երթայ հասնաքուր, և հարսնաղբար ամենեւին չըկայ և չըլնայ:

Թէ հարսնառ գնալու ժամանակը, և թէ գալու ժամանակը՝ թագւորի յառաջը թէխմախ խաղալ կամ գիւլէշ ըլռնել. և կամ ալ այսպիսի ինչ ամենեւին չըկայ. և թագւորը սաղով տնէտուն ժուռ ածել բնաւ չըլնայ. և խօնչայ հանել չըկայ ամենեւին:

Կեսուրը հարսին խիլան դռնէն դուրս պիտի չհանէ. և մահալէին մէջ գըլխուն չի պիտի ցըկէ. ալ իւր տունը մէջ:

Գուրսը՝ մահէլէն թագւորը որս հանել, և հաւի կամ ալ անասունի գըլուխ դարնել չկայ ամենեւին և չըլնայ:

Իկիտ փայի և շիշըղ ամենեւին չըկայ. և հայոց աղաքը բնաւին ալլազգ հետերնին հայոց հարսնիքը չի պիտի տանին:

Պսակը երկու շափթի կամ գիշերանց, և կամ ճաշու ժամուն ըլնայ. և երեք շափթի առաւօտը պսակը վերացուի. և մինչև յերեկոյ մարդ չըմնայ հարսնէտունը թէ ալ թէ կին, թէ մեծ և թէ փոքր. և ճէհէզը հարսը հետը տանի և ճէհէզ տեսանել չկայ:

Գարձ գնացող հարսը քսան օրէն աւելի չի պիտի մնայ մարանցը. ալ քսան օրէն յետոյ անպատճառ պիտի գայ կէրսանցը տունը:

Բոլոր օվայի մէջ որքան որ դէրիի տեղրանք կան,

Հայոց ազգին այն դէրիի օրերը բազմութենով այն տեղրանքը գնալ արգելմամբ արգելուած է. ո՛վ որ Հայոց ազգ եմ և քրիստոնեայ եմ կսէնէ, յայն օրերը այն տեղրանքը չի պիտի գնայ. բայց յայն դէրիի օրերէն դուրս մինակ ուր կամի թող գնայ:

Նոյնպէս և արգելմամբ արգելուած է Հայոց ազգին պար խաղալը. թէ ներսը գիւղին մէջ և տանը մէջ, և թէ դուրսը, թէ բարեկենդանին և թէ յալլ օր: Բայց թէ հարսանեաց մէջ կամիցին խաղալ, ալր և կին խառըղղ ի միասին բնաւ խաղլու հրաման չըկայ և չի պիտի ըլնայ. ալլ ալր մարդը ջոկ մէկ տանըմ մէջ պարտի խաղալ և կին մարդը ջոկ մէկ ուրիշ տանըմ մէջ, ամենևին զատ զատ. և ալր մարդ ո՛վ ոք և իցէ կանանց խաղալը չի պիտի տեսնէ. ուրեմն երանի էր թէ՝ ով հաւատացեալ սիրելիք իմ, այդ հոգւոյ և մարմնոյ վնասակար չար սովորութիւնը բիւթիւնէ բիւթիւն ամենևին վերցնէիք:

Վերջապէս բիւթիւն բիւթիւնէ արգելմամբ արգելուած է, ժամին դասերը ելնօղ աստիճանաւոր կամ առանց աստիճանի եղօղ՝ թէ մեծ թէ փոքր տիւրացունէրուն թէ հարսնէտան մէջ և թէ դուրսն՝ պար խաղալը, զուռնայ կամ տիկ չալելը, և խաղ կանչելը. ալլ պէտք է անոնց հոգւոր երգերու հետեիլ և սովրիլ՝ ու ըսել. մարմնաւորին հետեիլ չըկայ և չըլնայ:

Համայն օվայի գիւղորէից նորապէս սահմանեալ բարեկարգութեան օգտաւէտ և պատուիրանական կանոններ, զոր պարտին ամենայն Հայազգի քրիստոնեայք ամենայն յօժարութեամբ ընկալնուլ և հաստատուն պահել:

Այս ամենայն խրատական և կանոնական թէմպէհներս աստուծոյ կողմանէն ձեր հոգւոր և մարմնաւոր օգտաւէտութեանը համար աւանդեցինք. որ ամէն շաբաթ երեկոյի յեկեղեցւոյ մէջն պարտիք կարդալ և միտք

առնել և սլահել. ապա ո՞վ որ այս գրածներուս անհր-
նազանդ կը գըտնվի՝ հոգւով և մարմնով դատապար-
տութեան ներքև կանկանի:

Ն. Ծ. Յովհաննէս
արք եպիսկոպոս
Կարմիր Վանից:

Ի 1822 ամի Տեառն.

փետրվարի ա

Ի Կարմիր վանս սուրբ

Աստուածածնի:

ԺԸ ԴԱՐՈՒ ԿՏԱԿ ԹԻՓԼԻՋԻ ՀԱՅ ՔԱՀԱՆԱ- ՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Կտակ անելու սովորութիւնը շատ հին է մեր մէջ. մեր
նշանաւոր վանքերի արձանագրութիւնների մեծ մասը կտակնե-
րի վաւերագիրներ են, որոնցով մէկը իւր տունն է նուիրում
եկեղեցուն և նորա պաշտօնեաներին, միւսը ջրաղացը, ուրիշը
լուսագին, ձէթ, խուսկ ու մոմ և այլն. հին ժամանակն էլ այս-
պէս էր հասկացւում բարեգործութիւնը, որ ամբողջապէս կը-
նի շուրջն էր ամփոփւում:

Արդարև այդ տեսակ բազմաթիւ կտակներ կային և կան
այսօր իսկ շատ տեղեր. բայց այս օրերս մեր ձեռքն ընկաւ մի կտա-
կի պատճէն, որ իւր տեսակի մէջ եթէ չենք սխալւում առա-
ջինն է և չէ պատահած տարեգրութեան մէջ. այդ կտակը հե-
տեւեալն է.

Թիֆլիսի Հաւաքար քաղաքամասում գտնուած Խօջի-վան-
քի հանգստարանը նուիրող և եկեղեցին շինող Խօջաբեհրուդի
թոռնորդի Մէլլէ աղայն իւր եղբայր Ստեփաննոսի հետ միասին
1745 թուին կազմում են մի կտակ, որով իրաւունք է տըր-
ւում քաղաքիս տասն եկեղեցիների և Խօջիվանքի քահանանե-
րից նոցա, որոնք շաբաթ և կիրակի պատարագ պիտի մատու-
ցանեն, ուրբաթ օրը գնալ իրանց (Խօջի) բաղանիքը և լուա-
ցուիլ անվարձ, լուացուելուց յետոյ ստանալով բաղանիքի դրա-
մարկղից 100 դեան. այդ արտօնութեանց փոխարէն կտակող-